

Ես փնտրում էի,
մինչ աշխարհաստեղծությունը
որոնում էի հայացքս,
ինչպես երկրպագուները Հերայի,
ուն պատկերը
թափառում է նոր աշխարհի ճանապարհներին,
և նա, ով տեսել է վարդը,
տեսել է նաև ստվերը պարականոն մեր գոյության;
Հողը անհայտությունն է,
որի ծալքերում թափառող մահը
մաքրում է հիշողությունը մեր,
երբ ծնվում ենք;

Բառերը նույնպես թափառում են
հեռացող ակնթարթների անհուսությամբ,
ինչպես մենք ենք թափառում անհայտներում
ու խոնարհվում ենք փայտե աստվածներին,
աստվածներին պատերազմների,
աստվածներին նյութերի,
աստվածներին իրերի,
ու մանուշակագույն գիշերը,
մահացողին փաթաթվող պատանքի պես,
պահպանում է դեռևս բնագոյները
նույն միջավայր-աստվածանում2,
նրանց գաղտնի շնչոցով հասունանում է սերը՝
արյան, սերմերի ու հիշողության այդ մետաֆորիզը:

Եղևնին թաց դողում է դեռ կաթնալույսում.

(ըստ Շոպենհաուերի՝ կամքը յուրաքանչյուր
մարդու մեջ է, ed ist՝3
մարդը փոքրիկ միկրոկոսմ է):

Տխուր են իրերը.
գերիները սեփական աստվածուրացության:
Գիշերվա անխոսությունը խախտում է
ժամանակի դեղին շնչառությունը միայն:

Ոչ ոք չի գնում, ոչ ոք չի գալիս.
ամեն կույր օր իր արգանդում
նոր կույր օրվա սաղմն է կրում:

Ստվերները հեռանում են գերեզմանահոտ
կանաչ բորբոսով լեցուն աթոռներից,

իսկ մուրացկանը մեռնելուց առաջ
հիշում է ամպայման պատճառի,
սկզբի ու միասնության մասին,
և այն մասին,
որ դրությունը դուրս է խաղից,
որ ինքը արքա էր ինչ-որ ժամանակ,
որ բոլորս մետամորֆոզներն ենք հի՛ն-հի՛ն,
նախաստեղծ մի պոետի, որ հասավ Բառին...
ու լռությունն իջնում է ծղոտե տանիքներին,
ու աշխարհը՝ ծղոտե տիկնիկների ուսերին:

Մահացածները չեն քայլում ջրերի վրայով,

փետրվարը շնչում է մահվան պես ընդհատ,
ու սենյակի անշունչ տարածությունը լցվում է
ավելի շատ համառությամբ, քան սիրով,

(մահից, միևնույնն է, մարդու հոտ է գալիս,
և նա, ով տեսել է վարդը,
տեսել է նաև ստվերը սև արևի,
nescio quid majus nescitur Iliade)⁴,

մենք ընդամենը ստվերներն ենք մեր երազների
ու աճում ենք փոքրիկ, ցածրիկ, միայնակ տների
մեր սենյակներում,
որտեղ թափառում է քամին վերջին ճանապարհից առաջ,
որտեղ փոխվում է մեր ժպիտը,
ու խաղում է արյունը մետամորֆոզներում
բացվող-փակվող մեր մատների,

այդպես դագաղն է լողում լույսին ընդառաջ,
այդպես թաղում են մեռած նավերին:

- 1.Պարականոն գիր;
2. Գոլ միջավայր, որտեղ բիոֆիզիկները Lactobaclius, Acidophilus բակտերիաներ են աճեցնում:
3. Կաբալիստները գտնում էին, որ մարդը տիեզերքի նշան-հայելին է:
- 4.Nescioquid majus nescitur Iliade..Ծնվում է մի բան, որ Իլիականից.. էլ մեծ է..Վարդիլիոսի Էնեականի մասին: